

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԿԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ, ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Եղբայրական սիրով կողջունեմք զՁեզ և սույն կոնդակով կհաստատեմք Ձերդ Սրբության ընտրությունը իբրև թեմական առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներու հայոց, ընտրություն, որ կայացավ 16 նոյեմբեր 1958-ին:

Երկար և արդյունավետ են Ձերդ Սրբության ծառայության տարիները՝ իբրև հոգևոր վերակացու և առաջնորդ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո:

Աստուծո և մեր Եկեղեցիին նվիրյալ Ձեր կյանքը և գործունեությունը, իբրև իմաստուն և բարի մշակ, հայտնի է Մեզ և համայն հայ հավատացյալ ժողովուրդին: Մեր եկեղեցվո եպիսկոպոսական դասուն մեջ հոգևոր և իմացական հեղինակություն մը եք արդեն և Մենք զՁեզ կնկատեմք Մեր ամենաազնիվ գործակիցներեն մին՝ Մեր աստվածասեր ու եկեղեցաշեն նպատակներու իրագործման դժվարին սակայն փառավոր ճամբուն վրա:

Եվ Մենք վստահ ենք, թե Ձեր նոր պաշտոնով, իբրև հոգևոր առաջնորդը Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեր հավատացյալ ժողովուրդին, գործակցաբար թեմական խորհուրդիդ հետ, առավել պիտի արդյունավորեք Ձեր աշխատանքը և Ձեր եռանդը՝ ի շինություն ամերիկահայ ժողովուրդի հոգևոր կյանքին և ի մխիթարություն Մեզ:

Նույն Ձեր հավատքին հուրով, նույն սիրով դեպի մեր հավատացյալ ժողովուրդը և նույն հավատարմությամբ դեպի աստվածակառույց Ս. Էջմիածինը, շարունակեցե՛ք քարոզել Տիրոջ խոսքը, շարունակեցե՛ք սեր և խաղաղություն բաշխել բոլոր հայ հուսացյալ հոգիներուն անխտիր և շարունակեցե՛ք Ձեր ջանքերը՝ վերահաստատելու համար եղբայրական միությունը և համերաշխությունը ամերիկահայ հավատացյալ ժողովուրդին մեջ:

Փիտցե՛ք, սիրելի՛ Սրբազան, որ Ամերիկայի մեջ Մենք չենք ճանչնար անջատյալ եկեղեցիներ: Բոլորը անխտիր Դուք նկատեցե՛ք Ձեր հարազատ զավակները, ենթակա Ձեր հոգևոր իշխանության, և անձանձրույթ կերպով սիրո հուր վեր կարդացե՛ք ամենուն:

Մեր պատվերն է, որ Ձեր եկեղեցիները և Ձեր հավատացյալները հեռու պահեք քաղաքական փորձություններեն, մնալով հավատարիմ Ձեր Երկրի օրենքներուն և շահերուն: Միշտ հիշեցե՛ք և հիշեցուցե՛ք, թե բոլոր անունք, որ եկեղեցին քաղաքական պայքարներու թատր դարձնել կփորձեն, Աստուծո դեմ կմեղանչեն և Քրիստոսի եկեղեցին կոկարացնեն: Մեր բոլորիս սեպուն պարտքն է՝ հեռու մնալ քաղաքական-ընկերային հակամարտությանց սահմաններեն, և ամեն մեկս տվյալ պայմաններուն մեջ գործելով, հառաջ տանիլ Աստուծո գործը, ամրացնելով մեր Ս. եկեղեցվո հիմքերը, պահպանելով և առավել զորացնելով հայ հավատացյալ ժողովուրդի միասնությունը՝ հավատքի վեմ Ս. Էջմիածնով:

Մասնավոր ուշադրությամբ և հայրական գուրգուրանքով մոտեցե՛ք նոր սերունդին՝ ամերիկահայ երիտասարդներուն և պատանիներուն, դաստիարակելու համար զանոնք Ավետարանի լույսով և հայկական շունչով, որպեսզի անոնց խանդավառ հոգիները զարդարվին մաքուր հավատքով, բարոյական առաքինություններով և ազգային առողջ գիտակցությամբ՝ հայ լեզվի, հայ մշակույթի և Հայոց աշխարհի պաշտամունքով:

Անխառն սիրով կշնորհավորենք զՁեզ և կմաղթենք Ձերդ Սրբազնության քաջառողջ երկար տարիներ, ուժ և եռանդ և աստվածային օգնականություն, փայլուն կերպով արդյունավորելու համար Ձեր պաշտոնը և Ձեր աշխատանքը՝ ի փառս Աստուծո և մեր Ս. եկեղեցիին:

Արդ, սիրելի՛ Սրբազան Եղբայր, «ԱՐԹՈՒՆՔ ԵՂԻՑՈ՛ՒՔ, ԵՒ ԶԳԵՑՑՈ՛ՒՔ ԶԶՐԱՀՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ԶՍԻՐՈՅ, ԵՒ ԴԻՑՈՒՔ ԶՍԱՂԱՒԱՐՏՆ ՅՈՒՍՈՅՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ» (Ա Թեսաղ. Ե 8):

Կողջունենք և կօրհնենք նաև ամերիկահայ թեմական պատգամավորական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն հավատացյալ և սիրեցյալ մեր ժողովուրդը, մնալով աղոթող բոլորին արևշատության և երջանկության համար:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆԴ ՁԵԶ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ, ԱՄԷՆ»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-2-ն յունուարի
1959 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԸ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: